ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____ 2017 թ. N _____-Ա

ք.Ստեփանակերտ

Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հավանություն տալ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի Արցախի Հանրապետությունում կիրառման առանձնահատկությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծին:

2. Արցախի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի Արցախի Հանրապետությունում կիրառման առանձնահատկությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը քննարկելիս Արցախի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ նշանակել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Ժիրայր Միրզոյանին:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
2.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ		
3.	ԱՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Վ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ		
4.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
5.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		
6.	ԱՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ	Կ.ԱՂԱՋԱՆՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2017 թ.

ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սահմանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) Արցախի Հանրապետությունում կիրառման առանձնահատկությունները:

Հոդված 2. Օրենսգրքի 114-րդ հոդվածի դրույթները կիրառել հետևյալ բովանդակությամբ.

«***Հոդված 114. Արգելված վայրում գյուղատնտեսական կենդանու գտնվելը***

Արգելված վայրում գյուղատնտեսական կենդանու (խոշոր եղջերավոր կենդանի, մանր եղջերավոր կենդանի, խոզ, ձի, ջորի և ավանակ) գտնվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պատասխանատու անձի՝ անասնատիրոջ կամ անասնապահի նկատմամբ յուրաքանչյուր կենդանու մասով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկից մինչև երեսունհինգապատիկի չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

Վերջին տարիներին բացթողի վիճակում գտնվող գյուղատնտեսական կենդանիների դեպքերի տարածվածությունը և դրա ծանր հետևանքներն ավելի և ավելի մտահոգիչ են դառնում: Մասնավորապես, կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների՝ առանց հսկողության թողնելու վտանգն ավելի տարածված է:

Գործող օրենսդրությունն ունակ չէ համարժեք պատասխան տալ ծագած մարտահրավերներին. այն չի ապահովում արգելված վայրում գյուղատնտեսական կենդանու հայտնվելու վտանգի կանխարգելման գործուն իրավական կառուցակարգեր:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է գյուղատնտեսական կենդանու արգելված վայրում հայտնվելու համար վարչական պատասխանատվություն սահմանող դրույթներին: Գյուղատնտեսության զարգացման ռազմավարության մեջ անասնապահությունն այն բնագավառն է, որի առաջընթացով և հնարավոր հասցվելիք վնասներով պայմանավորվում է մյուս ճյուղերի զարգացումը: Ելնելով անասնապահության բնագավառում արդյունավետ աշխատանք կատարելու, նրա՝ որպես գյուղատնտեսության զարգացման շարժիչ ուժ դիտարկելու սկզբունքից և գիտակցելով անասնապահության դերը բուսաբուծության հետագա զարգացման և դրական ցուցանիշների գրանցման հարցում, ինչպես նաև հաշվի առնելով առանց հսկողության թողնված գյուղատնտեսական կենդանիների կողմից պատճառվելիք վնասները, առաջարկվում է հստակեցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համապատասխան հոդվածի բովանդակությունը, սահմանել պատասխանատվության սուբյեկտները, կոնկրետ գյուղատնտեսական կենդանիների տեսակները, քանակը և խստացնել իրավախախտում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվելիք տուգանքների չափերը:

Նշված իրավախախտման դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելը և դրանք կանխարգելելը, ինչպես նաև անասնապահների կողմից նրանց պարտականությունների պատշաճ կատարման ապահովումը հնարավոր է միայն նշյալ օրենսգրքի կիրառման առանձնահատկությունները սահմանելու միջոցով:

Սույն օրենքի նախագծի ներկայացումը պայմանավորված է Արցախի Հանրապետությունում, ելնելով տեղական պայմաններից և օրենսդրական կարգավորում պահանջող հասարակական հարաբերությունների կարգավորման ծայրահեղ անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի կիրառման առանձնահատկությունները սահմանելու, արգելված վայրում գյուղատնտեսական կենդանու հայտնվելու վտանգի տարբեր դրսևորումները կանխարգելելու և պատասխանատվության գործուն իրավական մեխանիզմներ նախատեսելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 114-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվություն՝ տուգանքի նշանակում արգելված տեղերում անասուններ պահող անձանց համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Հոդվածի տվյալ խմբագրությամբ կիրառումը պարզաբանման խնդիր է առաջացնում՝ կապված արգելված վայրերում գտնվող անասունների գլխաքանակի, տեսակի, ինչպես նաև արգելված վայրերում անասունի հայտնվելու հանգամանքի և պատասխանատվության սուբյեկտների որոշման հետ:

Օրենսգրքի գործող հոդվածով պատասխանատվություն սահմանելիս հաշվի են առնվել տուգանքների չափի ու նվազագույն աշխատավարձի միջև կապը, որը 2002 թվականի դեկտեմբերի 11-ի դրությամբ, երբ օրենսդրի կողմից տուգանքի չափերը հասցվել էին նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի, նվազագույն ամսական աշխատավարձի չափը կազմում էր 10 000 ՀՀ դրամ, իսկ ներկայումս այն 55 000 ՀՀ դրամ է:

Վարչական պատասխանատվության մեղմ պատժամիջոցները լիարժեք և արդյունավետ չեն դարձնում նշված իրավախախտման դեմ պայքարը, բացի դրանից վտանգավորության համաչափության առումով սխալ մոտեցում է արգելված վայրում կենդանու հայտնվելու հետևանքով պատասխանատվության սահմանումը ընդհանրացված կարգով:

Կոնկրետ իրավական կարգավորման արդյունքում առավել հեշտանում է վերահսկողությունը առաջացող իրավախախտումների մասով:

Նախագով, մասնավորապես, առաջարկվում է սահմանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի կիրառման առանձնահատկություններ, այն է Արցախի Հանրապետությունում օրենսգրքի գործող 114-րդ հոդվածով ամրագրել, որ արգելված վայրում գյուղատնտեսական կենդանու (խոշոր եղջերավոր կենդանի, մանր եղջերավոր կենդանի, խոզ, ձի, ջորի և ավանակ) գտնվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պատասխանատու անձի՝ անասնատիրոջ կամ անասնապահի նկատմամբ յուրաքանչյուր կենդանու մասով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկից մինչև երեսունապատիկի չափով:

Վարչական տուգանքների նոր չափերը սահմանվում են վարչական պատասխանատվության կանխարգելիչ, դաստիարակչական, պատժիչ գործառույթները երաշխավորելու, իրավախախտում թույլ տված անձի մոտ իրավահպատակ վարքագիծ ձևավորելու և ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը կանխելու նպատակներով:

<u>Ակնկալվող արդյունքը</u>

Նախագծի ընդունման դեպքում կստեղծվեն նախադրյալներ անասնապահության ոլորտում կատարվող իրավախախտումների քանակի նվազման, ոչ բարեխիղճ անասնապահության վարման վտանգավորության աստիճանի գիտակցման համար, որի արդյունքում անասնապահությամբ զբաղվող անձինք ավելի մեծ ուշադրություն կդարձնեն անասնապահության ոլորտի կանոնակարգմանը, իրավական ակտերի պահանջների կատարմանը:

Օրենքի ընդունումը կկատարելագործի տվյալ բնագավառում օրենսդրական դաշտը, լիազոր մարմինն ամբողջական և լիարժեք կիրականացնի օրենսդրությամբ իրեն վերապահված վերահսկողությունը:

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է իրավախախտներին վարչական պատասխանատվության ենթարկելիս հնարավոր ակնկալվող դրական արդյունքի հասնելը, անասնապահների սահմանված պարտականությունների կատարման ապահովումը, իրավախախտումների կատարման դեպքերի հնարավորինս նվազումը և հետագայում ի սպառ վերացումը:

<u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</u>

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի Արցախի Հանրապետությունում կիրառման առանձնահատկությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի Արցախի Հանրապետությունում կիրառման առանձնահատկությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի պահանջում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի Արցախի Հանրապետությունում կիրառման առանձնահատկությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն կառաջացնի:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ - ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի Արցախի Հանրապետությունում կիրառման առանձնահատկությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ